Հավելված N 2
2025 թվականի հունվարի «15»-ին կնքված
«1032-11002/2025-ԵՀ» պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | 1032-11002/2025-ԵՀ |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հույս տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 03.01.2025-31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025-19.12.2025 |
| Ներկայացման օր | 22.12.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Նելլի Մարկոսյան<br>Ծրագրի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

*Գործողություն 1*
Յուրաքանչյուր շահառուի համար ժամանակ առ ժամանակ կվերանայվի այցելությունների գրաֆիկը:

*Գործողություն 2*
Կկազմակերպվի խնամքի ծառայությունների տրամադրում շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝

- ✓ կենցաղային սպասարկում
- ✓ բժշկական օգնություն և սպասարկում
- ✓ սոցիալ-հոգեբանական օգնություն
- ✓ խորհրդատվական աջակցություն

*Գործողություն 3*
Ժամանակին և պատշաճ որակով Նախարարությանը կներկայացվեն ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

2.3.

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակում նախատեսված գործողություններից իրականացվել են հետևյալները.

***Գործողություն 1***

Վերանայվել է սոցիալական աշխատողի, սոցիալական սպասարկողների և բուժքրոջ կողմից կատարվելիք պարբերական այցելությունների գրաֆիկները (Հավելված 1):

***Գործողություն 2***

Հաշվետու ժամանակահատվածում *սոցիալական սպասարկողները* ապահովել են շահառուների կենցաղային սպասարկումը՝ ներառյալ անձնական հիգիենայի պահպանումը, բնակարանի մաքրությունը, անհրաժեշտության դեպքում լոգանքի կազմակերպումը, գնումների կատարումը, կոմունալ վճարների մուծումը: Սոցիալական սպասարկողները շահառուներին անհրաժեշտության դեպքում ուղեկցել են բժշկական հաստատություն, առևտրի կենտրոններ: Բացի այդ, սոցիալական սպասարկողները կատարել են համապատասխան գրառումներ շահառուների անհատական ծրագրերում՝ արձանագրելով նրանց վիճակի փոփոխությունները և մատուցված ծառայությունները (Հավելված 2):

*Բուժքույրը* ապահովել է շահառուների բժշկական կարիքների սպասարկումը՝ իրականացնելով բժշկի նշանակումների կատարումը, դեղերի տրամադրումը: Նա համակարգել է շահառուների այցերը պոլիկլինիկա, անհրաժեշտության դեպքում ուղեկցել նրանց այլ բժշկական հաստատություններ և հետևել նրանց առողջական վիճակի փոփոխություններին:

*Սոցիալական աշխատողը* հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է շահառուների սոցիալական կարիքների գնահատում, ուղղորդում, ուղեկցում և համապատասխան աջակցության ցուցաբերում:

Շահառուներին տրամադրվել է խորհրդատվական աջակցություն՝ ինչպես ծրագրի բովանդակության, այնպես էլ իրենց իրավունքների վերաբերյալ: Նա շահառուներին իրազեկել է պետական աջակցության տարբեր միջոցառումների, դրանցից օգտվելու հնարավորությունների, ինչպես նաև համապատասխան ծառայությունների հասանելիության վերաբերյալ:

***Գործողություն 3***

Ժամանակին և պատշաճ որակով Նախարարությանը ներկայացվել են ամսական ֆինանսական հաշվետվությունները:

2.4. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

| |
|---|
| Ծրագրի գործողությունների իրականացման ընթացքում խոչընդոտներ չեն գրանցվել: |

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում, կարիքի վերագնահատման արդյունքում Ծրագրում ներառված շահառուներին (Մարագրիտ Պողոսյանին և Վարիյա Ավանեսյանին) տրամադրվել է մեկական տուփ տակդիր, իսկ Սոնյա Փուզյանին՝ քայլակ (Հավելված 3): Ինչպես նաև վերանորոգվել է շահառուներ՝ Սվետլանա Տոնապետյանի լոգարանի ծորակը, և Գոհար Խոյեցյանի պատուհանի փականը: |

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ

տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 24/24 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 17 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 3 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 1 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 2 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 21 |
| 1.4 | այդ թվում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված | 3 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 2<br>Բ - 22 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 24 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 24 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 24 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 0 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 24 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) | |

Հիմնադրամի տնօրեն՝ «19».12.2025թ.